ԳՅՈՒԼԻՍՏԱՆ

Արցախ-Ղարաբաղի հին ու նշանավոր գյուղերից է: Մատենագիտությունից և տեղում պահպանված վիմագիր արձանագրություններից հայտնի է, որ մինչև 15-րդ դ. գյուղը կոչվել է ՎԱՐԴՈՒՏ, այնուհետև թուրքերեն բառացի թարգմանությամբ՝ Գյուլիստան: 1466 թ. գյուղի գրչատանը գրված մի ձեռագիր հիշատակարանում գրիչ Հակոբը հայտնում է, որ «ի գեղս որ կոչի Գուլիստան, որ է ՎԱՐԴՈՒՏ...»: Գյուղը 17-րդ դարում Արցախի արդյունավետ գրչօջախներից էր: Հայտնի են 1689 և 1692 թթ. Դավիթ գրչի կողմից ստեղծված ձեռագրերը, որոնք, բարեբախտաբար, պահվում են Մատենադարանում:

Գյուլիստանում, ինչպես նշվեց, կնքվել է ռուս-պարսկական հաշտության պայմանագիրը. «Հանդիպում ունեցան Գ(յ)ուլիստանում, ուր պարսիկները և ռուսները հաշտվեցին, տալով իրար փոխադարձ տրակտատ հաշտության և որոշելով սահմանները»:

Գյուլիստանը գտնվում է շրջկենտրոնից՝ Շահումյանից 20 կմ հարավ, Ինջա գետի ձախ կողմի ձորալանջին, շրջապատված անտառներով ու ալպյան մարգագետիններով: Գյուղի կոլեկտիվ տնտեսությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերակուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ: 1991 թ. հունվարի մեկի տվյալներով գյուղն ուներ 1156 հայ բնակիչ: Գյուղից 379 հայորդիներ մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին: 178-ը զոհվել են Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելոռուսիայի ազատագրման մարտերում, իսկ հիմա ռուս, ուկրաինացի սպաները, զինվորները իրենց տանկերով, մարտական ուղղաթիռներով զրահապատ այլ զենքերով թուրքերի հետ ձեռք-ձեռքի տված ավերում են Գյուլիստանը, կոտորում նրա բնակչությանը, ալան-թալանի ենթարկում հայերի ունեցվածքը: Ինչպիսի՜ պարադո՛քս...

Ինչպես գյուղում, այնպես էլ նրա շրջակայքում պահպանվել են բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ: Գյուղամիջում կանգուն են Աբրահամ սպարապետի ժառանգների մզիթական ապարանքը՝ բաղկացած մեկ երդիկավոր գլխատնից և կից թաղակապ սենյակներից՝ 1782 թ. արձանագրված տապանաքարերով հարուստ հին գերեզմանոցը, եռանավ բազիլիկ հորինվածքով սբ. Աստվածածին եկեղեցին, առանձին խաչքարեր և այլ հնությունների մնացորդներ:

Անշուշտ, Գյուլիստան գյուղում ու նրա շրջակայքում պահպանված հուշարձանների թվում առանձնապես հայտնի է համանուն բերդը, որը գտնվում է գյուղից 5 կմ հարավ, Ինջա գետի ու նրա վտակի միջև՝ իշխող ու դժվարամատչելի սարի երկարավուն, հարթ գագաթին: Տեղանքի ընձեռած առանձնահատկություններին հարմարվելով բերդը ունի շուրջ 237 մ երկարություն և 35 մ լայնություն: Պարիսպները պահպանվել են մինչև 8—10 մ բարձրությամբ: Ներկայումս կիսավեր դրության մեջ են ինչպես բուրգերով ամրացված պարսպապատերը, այնպես էլ ներսում գտնվող բազմաթիվ աշխարհիկ շինությունները:

Միջնադարյան այս հզոր բերդ-ամրոցը 18-րդ դ. սկզբներին Գյուլիստանի մելիքները վերականգնել, ավելի անխոցելի են դարձրել և վտանգի դեպքում ամրացել են նրանում ու հակահարված տվել թշնամուն: Այս բերդը հայկական ամրոցաշինության լավագույն ինժեներական կառուցվածքներից մեկն է, Հյուսիսային Արցախի կարևոր սղնախներից ամենամեծը:

ՇԱՀԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ